ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ՕՐՕՔ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ

Նազենի Ղարիբեան

Էջմիածնի մայր տաճարի կամ, ըստ ժամանակագրական առաւել ճշգրիտ անուանման՝ Վաղարշապատի Կաթողիկէի վերակառուցումը՝ Վահան Մամիկոնեանի կողմից հինգերորդ դարի վերջին՝ այս կարեւորագոյն յուշարձանին վերաբերող սակաւաթիւ տեղեկութիւնների ու փաստերի շարքում ամենայայտնիներից ու վստահելիներից է[1]: Դրանով հանդերձ, այս եղելութիւնը բազմաթիւ հարցեր ու խնդիրներ է առաջ բերել եւ մեծ բանավէճերի առիթ է հանդիսացել արուեստի պատմութեան, հնագիտութեան եւ բանասիրութեան ոլորտներում, մասնաւորապէս՝ վերակառուցման արդիւնքում չէնքի յատակագծի եւ ճարտարապետական տիպի փոփոխութեան վերաբերեալ[2]: Դրանցից ամենակարեւորներին մենք հանգամանօրէն անդրադարձել ենք տաճարի նախնական տեսքին վերաբերող ծաւալուն յօդուածում եւ մեր դոկտորական թեզում[3] փորձելով բոլոր տուեալների համադրութեան օգնութեամբ դուրս բերել հնարաւորինս ճշգրիտ, առաւել փաստարկուած պատասխաններ եւ գտնել տրամաբանական, հակասութիւններից զերծ լուծումներ: Այդուհանդերձ, թեման դեռեւս հեռու է սպառուած համարուելուց:

Կաթողիկէի վերանորոգմանը վերաբերող հարցերի համալիրում կայ եւս մէկը, որին կը ցանկանայինք անդրադառնալ սոյն շարադրանքում. դա աշխատանքների սկսման թուականն է: Ըստ մասնագէտների մեծ մասի՝ այն տեղաւորւում է 484-490 թթ. միջեւ՝ որպէս ժամանակագրական սահմաններ ընդունելով ապստամբութեան աւարտը եւ Նուարսակի հաշտութեան պայմանագիրը Վահանի ու Նիխոր Վշնասպդատի միջեւ եւ Յովհաննէս Մանդակունու մահը[4]: Ամենահաւանական թուականն ընդունուել է 485-ը[5], որի ընտրութիւնը յենւում է իրար յաջորդող երկու փաստական հետեւութիւնների վրայ, ըստ որոնց Վահան Մամիկոնեանը վերակառուցման աշխատանքները պէտք է սկսած լինէր միայն մարզպան նշանակուելուց յետոյ[6], իսկ այդ նշանակումը տեղի է ունեցել Վահանի՝ Տիզբոն մեկնելուց եւ Մամիկոնեան տանուտիրոջ ու սպարապետի տիտղոսը վերանուաճելուց մէկ տարի անց, որն էլ, ընդհանուր առմամբ, համարւում է 485 թ.[7]: Սակայն կան նաեւ կարծիքներ, ըստ որոնց վերանորոգումը կատարուել է մինչեւ ապստամբութեան աւարտը[8] կամ մինչեւ մարզպան նշանակուելը[9]: Տարակարծութեան պատճառը վերանորոգման մասին յիշատակող աղբիւրների տեղեկատուական անորոշութիւնն է:

Ամենաարժանահաւատ աղբիւրը իրադարձութեան ժամանակակից եւ ականատես[10] Ղազար Փարպեցին է: Վերանորոգման բուն յիշատակութիւնը գտնում ենք նրա Հայոց պատմութեան մէջ. «Եւ եկեալ հասանէր այնուհետեւ ի Վաղարշապատ քաղաք հանդերձ ողջախորհուրդ եւ անենգ ուխտապահ նախարարաւքն Հայոց. կատարէր զսովորական ուխտս եւ զպատարագս ի սուրբ եկեղեցւոջն կաթողիկէի, զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց, քաջ զաւրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան»[11]:

Ըստ պատմիչի խօսքի յաջորդականութեան՝ Վահանը գնում է Վաղարշապատ Պերոզի մահուան եւ Հայոց աշխարհից պարսից զօրքի հապշտապ ետ վերադառնալու լուրն ստանալուց յետոյ, որտեղից էլ մեկնում է Դուին եւ դադար առնում՝ սպասելով «հրամանի առաջնորդութեանն Քրիստոսի»:

Յաջորդը Սեբէոսի Պատմութիւնն է, որտեղ Վահանի վերակառուցման յիշատակութիւնը նախորդում է Հեփթաղների դէմ Պերոզի արշաւանքի եւ նրա մահուան տեղեկութեանը. «Այս Վահան ժողովեաց եւ զհարկս աշխարհին Հայոց եւ չինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաք եւ ի Դւնի եւ ի

---

1 Ցուշարձանի մասին IV-XV դդ. պատմական տեղեկութիւնների թուարկումը եւ համառօտ վերլուծութիւնը տե՛ս **N. Garibian de Vartavan**, *L'aspect primitif de l'Eglise-mère Etchmiacin*,- REArm, 29 (2003-2004), էջ 403-501, մասնաւորապէս՝ 404-408.

2 Տարբեր վարկածների եւ տեսակէտների մանրազնին քննութիւնը տե՛ս *նոյնը*, էջ 409-432:

3 *Նոյնը*. թեզը՝ Art et théologie en Arménie du IV au VII s: étude de l'église comme temple chrétien, Paris, EPHE 2005; մաս IV, էջ 288-356:

4 **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, Կոնստանդնուպոլիս, I մաս, § 320-321

5 **Ա. Սահինեան**, *Նոր նիւթեր Էջմիածնի Մայր տաճարի կառուցուածքի վերաբերեալ*,- «Էջմիածին», 1956, Ը-Թ, էջ 60-69; **P. Donabédian**, *Les premiers édifices chrétiens d'Arménie*,- Armenia sacra, catalogue de l'éxposition du Louvre, Paris 2007, p. 48-59, յատկ. 57

6 **Ստ. Մալխասեանց**, *Ղազար Փարպեցու հրատարակութեան առաջաբան*, Թիֆլիս, 1904, էջ Ա. **Բ. Ուլուբաբեան**, *Ղազար Փարպեցի*, հրատ. *Թուղթ առ Վահան Մամիկոնեան*, ծնթ. 26, էջ 518

7 **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, § 316-317, 320. **Ստ. Մալխասեանց**, *Առաջաբան*, էջ Ա եւ Բ. **Վ. Իսկանեան**, *Մարզպանական Հայաստանի ապստամբութիւնը Պարսկաստանի դէմ եւ Բիւզանդիան* (Ե դ. վերջ եւ Զ դ. սկիզբ), ՊԲՀ, 1969/1, էջ 29-42. **K. Youzbašyan**, L'amertume de Łazar P'arpec'i, *From Byzantium to Iran: In Honour of Nina Garsoian*, Atlanta 1996, p. 325-340:

8 **Մ. Չամչեան**, *Պատմութիւն Հայոց*, հտ. II, Վենետիկ-Ս. Ղազար, 1785, էջ 195: Չամչեանը ժամանակագրօրէն բաժանում է Կաթողիկէի վերանորոգութիւնը եւ Սուրէնեաց անապատի նորոգութիւնը, որ նա տեղադրում է Դերջան գաւառում: Վերջինը, սակայն, թուագրում է Վահանի մարզպան դառնալուց յետոյ՝ 485 թ. (նոյնը, էջ 217). P. Pamboudjian, La cathédrale d'Etchmiadzin à la lumière des découvertes récentes,- in: J. Mécérian, Histoire et institution de l'Eglise arménienne, Beyrouth 1965, pp. 347-380:

9 **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, § 321. **Կ. Տէր-Մկրտչեան**, *Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն*, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 1908, էջ 179-81: Ըստ հեղինակի՝ Վահանը կարող էր նման որոշում կայացնել՝ որպէս Մամիկոնեան տանուտէր, քանի որ Վաղարշապատի սրբավայրերը գտնւում էին իր հողային տիրոյթներում: Տէր-Մկրտչեանն, այսպիսով, վերակառուցման թուականը համարում է 487-ը, իսկ Վահանի՝ մարզպան նշանակուելու տարին՝ 488-ը: Սակայն այլ աղբիւրներ նշում են, որ նա միեւնոյն ժամանակ եկեղեցիներ է վերակառուցել նաեւ մայրաքաղաք Դուինում եւ ընդհանրապէս Հայաստանի բազում այլ վայրերում (յղումների համար տե՛ս ստորեւ): Խաչատրեանը (**A. Khatchatrian**, *L'Architecture arménienne du IV au VI s.*, Paris, 1971, p. 87), հիմնուելով հաւանաբար Փարպեցու պարբերութեան վրայ, գտնում է, որ Վահանը Կաթողիկէն վերակառուցել է մինչեւ Նուարսակի պայմանագիրը, երբ յաղթական ճակատամարտից յետոյ գալիս է Վաղարշապատ 484 թ., իսկ յաջորդ՝ 485 թ. նշանակւում է մարզպան: Վերակառուցումը, առանց որոշակի փաստարկների, Վահանի մարզպանութիւնից առաջ, բայց Նուարսակի պայմանագրից յետոյ է տեղադրում Ղազարեանը՝ նոյնպէս թուագրելով 484 տարով, **А. Казарян**, *Кафедральный собор Сурб Эчмиадзин и восточнохрис-тианское зодчество IV-VII веков*, М., 2007, ст. 15.

10 Դատելով տեղ գտած մի քանի ակնարկներից, որոնք կը քննարկենք ստորեւ՝ Կ. Տէր-Մկրտչեանի կարծիքով, վերակառուցման աշխատանքներն ընթացել են Փարպեցու հսկողութեամբ. տե՛ս *նշ. աշխ.*, էջ 179:

11 **Ղ. Փարպեցի**, *Պատմութիւն*, § 86

© National Library of Armenia

Մզրայս եւ բազում տեղիս աշխարհին Հայոց»[12]:

Ժամանակագրական նոյն յաջորդականութիւնը տալիս է նաեւ Դրասխանակերտցին. «...եւ ժողովեալ զհարկ աշխարհիս՝ չինէ այնուիկ զեկեղեցիս զաւերեալս ի թշնամեաց՝ թելադրութեամբ եւ խրատու եւ աղօթից նպաստիւ սուրբ հայրապետին Յովհաննու Մանդակունւոյ»[13]:

Ասողիկը Վահանի՝ շինարարական գործունէութիւնը նկարագրում է նրա մարզպանութեան մասին յիշատակելուց յետոյ. «Իսկ Վահան եկեղեցիս Աստուծոյ լուսազարդեալ նորոգէր զպաշտօնեայս ուխտին մեծարելով՝ բարեշէն զաշխարհս ունելով: Նոյնն եւ ի ժամանակս իշխանութեան իւրոյ զմեծ կաթողիկէ եկեղեցին, որ ի Հայս վերստին մեծապէս նորոգեաց...»[14]: Սակայն պատմիչի շարադրանքի բնոյթից դժուար է ժամանակագրական յստակ եւ յուսալի յաջորդականութիւն սահմանել: «Ի ժամանակս իշխանութեան իւրոյ» արտայայտութիւնից կարելի է միայն ենթադրել, որ վերանորոգութիւնը տեղի է ունեցել Վահանի մարզպան դառնալուց յետոյ:

Փորձենք կրկին քննութեան առնել այս իրադարձութեանն առնչուող փաստերը, տեղեկութիւններն ու եզրակացութիւնները:

Թէեւ Փարպեցու մօտ վերակառուցման մասին տեղեկութիւնը զետեղուած է Նուարսակի հաշտութիւնից առաջ, այնուամենայնիւ, կարծում ենք, որ ժամանակագրական առումով այն իր տեղում չէ[15]: Նախ՝ «կատարէր զսովորական ուխտս եւ զպատարագս» չի համապատասխանում որեւէ եկեղեցու հիմնարկեքի արարողութեանը, մանաւանդ որ դրանից յետոյ Վահանն իր շքախմբով այցելում է նաեւ Վաղարշապատի միւս վկայարանները, որտեղ եւս որոշ սովորական արարողութիւններից եւ աղքատների կարիքները հոգալուց յետոյ սովորական խնջոյքի է նստում: Վահանի այս սովորոյթը Վաղարշապատում Փարպեցին նշում է եւս երկու անգամ՝ գրեթէ նոյն արտայայտութիւններով[16]: Ապա՝ նմանատիպ շինարարութեան համար նիւթական մեծ ծախսեր են հարկաւոր, որ հազիւ թէ Վահանը կարողանար այդ պահին տրամադրել: Ճիշտ է, միւս աղբիւրների համաձայն՝ եկեղեցիների վերանորոգումից առաջ Վահանը հաւաքել էր «զհարկս աշխարհին Հայոց», սակայն եթէ նոյնիսկ ենթադրենք, որ հարկահաւաքութիւնն իրականացուել էր ապստամբութեան տարիներին, ռազմական գործողութիւնների մէջ գտնուող Վահանը հազիւ թէ հրաման տար նորոգել ոչ միայն տաճարը, այլեւ միւս քանդուած եկեղեցիները. նրա եւ իր համախոհների առաջնահերթ մտահոգութիւնն այդ պահին ոչ թէ շինարարական գործունէութիւնը, այլ երկրի եւ իրենց հետագայ ճակատագիրն ու ռազմական եւ քաղաքական բնոյթի իրադարձութիւնները պէտք է լինէին: Փարպեցին ինքն էլ նշում է, որ նրանք վերադարձան Դուին՝ սպասելու, թէ ինչպէս են զարգանալու իրադարձութիւնները: Վերջինները երկար սպասել չեն տալիս: Պարսկական աւագանին Պերոզի փոխարէն շահնշահ է ընտրում նրա եղբայր Վաղարշին, որը, հեզաբարոյ, աշխարհաշէն եւ իմաստուն այր լինելուց զատ, նախեւառաջ պարտաւորութիւն ունէր վերականգնելու սասանուած կայսրութեան հզօրութիւնը[17]

12 Սեբէոս, գլ. Ը 15, քննական հրատ., *Մատենագիրք Հայոց*, Դ հտ., Անթիլիաս-Լիբանան, 2005

13 Աշխարհաբար թարգմ. եւ ծնթ. Գ. Թոսունեանի, ԵՊՀ հրատ., 1996, էջ 64:

14 *Տիեզերական պատմութիւն* (III. 2), հրատ. Կ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 82

15 Տե՛ս **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, § 321:

16 Տե՛ս **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, § 77 եւ 97:

17 Պերոզի պարտութիւնից յետոյ Հեփթաղները ներխուժել էին իրանական կայսրութիւն, գրաւել

եւ խաղաղութեամբ ու քաղցրաբանութեամբ հնազանդեցնել ապստամբ անարիներին, որոնցից առաջինների թւում եւ Հայոց աշխարհը[18]: Այդ պատճառով նա շուտափոյթ Նիխորին դեսպան է ուղարկում Հայաստան, որպէսզի վերջինս համաձայնութեան գայ Վահանի հետ, անգամ նրա եւ նրա համախոհների առաջադրած պայմաններն ընդունելու գնով, եւ նրանց կրկին «նուաճեալ յԱրեաց ի ծառայութիւն»[19] բերի:

Բացի այդ, Ղազար Փարպեցու՝ Վահան Մամիկոնեանին հասցէագրած թղթի առաջաբանում, որ գրել է հաւանաբար նրա ժամանակակից եւ նրան լաւ ճանաչող մէկը[20], յստակ նշուած է, որ Վահանը Վաղարշապատի Կաթողիկէի եւ կից վանքի հոգաբարձութիւնը Ղազարին է յանձնել մարզպան դառնալուց յետոյ. «Կամեցեալ մեծի իմաստութեանն Վահանայ մարզպանին, զաւրավարին Հայոց տեառն Մամիկոնէից... շնորհէր նմա զհոյակապ եւ զկանաւոր տեղին ի Նոր Քաղաքի, որում անունն էր սուրբ Կաթողիկէ եկեղեցի, վանաւքն»[21]: Միւս կողմից՝ բուն նամակից պարզ է դառնում, որ Փարպեցին ներկայ է եղել վերանորոգման աշխատանքներին հէնց սկզբի օրուանից, քանի որ պատմում է, թէ ոմն Ակիթ Գարդմանացի մասնակցել է հիմնարկեքի արարողութեանը. «...այր մի Ակիթ անուն, որ եկեալ ի տեղիդ ի Գարդմանայ վանաց ի նմին աւուր, յորում հիմն արկեաւ տեղւոյդ, եւ մինչեւ ցգնալն իմ ի տեղւոջդ էր...»[22]: Որից էլ կարելի է եզրակացնել, որ նա հոգաբարձու է նշանակուել ոչ թէ վերանորոգումից յետոյ, այլ առաջ կամ միեւնոյն ժամանակ եւ ղեկավարել է աշխատանքները[23]:

Պերոզի մահը վրայ է հասել 484 թ. ամռանից ոչ շուտ[24], քանի որ Մծբինի եպիսկոպոս Բարշաուման նրա հրամանով ժողով է գումարել նոյն թուականի ապրիլին, իսկ «քիչ ժամանակ անց» Պերոզը մահուան է դատապարտել կաթողիկոս Բաբովային[25]: Իսկ Վաղարշի թագադրութիւնը հաւանաբար տեղի է ունեցել նոյն թուականի ամռան վերջին կամ աշնանը, չնայած նրա գահակալութեան սկիզբը, ըստ իրանական տոմարային աւանդութեան, համարւում է 484-ի յուլիսի 23-ը[26]: Ըստ այդմ՝ Նուարսակի պայմանագիրը պէտք է տեղաւորել ոչ շուտ, քան 484 թ աշնանը:

տարբեր պրովինցիաներ եւ քաղաքներ եւ տարեկան հարկի տակ դրել պարսիկներին. **A. Christensen**, *L'Iran sous les Sassanides*, Paris-Copenhague, 1936, էջ 289, 295-96: Բացի պատերազմի վնասներից, Պերոզի օրօք նաեւ սաստիկ երաշտի հետեւանքով երկարատեւ սով է եղել, որ շարունակուել է նոյնիսկ նրա մահուանից յետոյ՝ 485 թ. տե՛ս նոյնը, էջ 285-286:

18 **Փարպեցի**, *Պատմութիւն*, § 87

19 *Նոյնը*, § 88

20 **Մ. Նալբանդեան**, *Ղազար Փարպեցու գրած Թուղթ. Մեղադրութիւն ստախօս աբեղաներին*, թարգմ. եւ ծնթ., Ս. Պետերբուրգ, 1868, ծնթ. 2. **Youzbašyan**, *L'amertume...*

21 Քննական հրատ., § 7, *Մատենագիրք Հայոց*, Բ հտ., Անթիլիաս-Լիբանան, 2003: Նոյն կարծիքին է նաեւ Թոմսոնը. *նշ. աշխ.*, էջ 6:

22 Քննական հրատ., § 104, *Մատենագիրք Հայոց*, Բ հտ., Անթիլիաս-Լիբանան, 2003: Ենթադրութիւնը, թէ խօսքը գնում է ոչ թէ տաճարի, այլ կից վանքի վերանորոգման մասին (տե՛ս **Նալբանդեան**, *նշ. աշխ.*, ծնթ. 6. **Մալխասեանց**, *նշ. աշխ.*, էջ Ա. **Ուլուբաբեան**, *նշ. աշխ.*, էջ 518, ծնթ. 26. etc **Khatchatrian**, *L'Architecture arménienne*, էջ 87 եւ յետոյ) քմածին է եւ չունի ոչ մի փաստական հիմնաւորում: Այս հարցին մենք հանգամանօրէն անդրադարձել ենք Կաթողիկէին նուիրուած վերոնշեալ յօդուածում:

23 Նոյն կարծիքին է նաեւ Տէր-Մկրտչեանը. *նշ. աշխ.*, էջ 179:

24 Եւ ոչ նոյն տարուայ սկզբին, ինչպէս տարածուած է հայագիտութեան մէջ. տե՛ս **Կ. Իւզբաշեան**, *Երբ է սկսուել...*:

25 Synodicon Orientale, Recueil des synodes nestoriens, Ed. du texte syriaque et trad. française, introd. et notes par J. B. Chabot, Notices et extraits des manuscrits de la Bibliothèque Nationale et autres bibliothèques, T. 37, Paris, 1902, էջ 308, ծնթ. 1. դիպուածի մասին տե՛ս նաեւ՝ **Christensen**, *նշ. աշխ.*, էջ 287:

26 **Կ. Իւզբաշեան**, *Երբ է սկսուել...*

© National Library of Armenia

Փարպեցին նշում է, որ Նիխորին հրաժեշտ տալուց յետոյ Վահանը վերադառնում է Դուին եւ Արտաշատի (այսինքն՝ Տափերի) կամուրջը քանդուած է գտնում, մինչդեռ դեռը «սաստկապէս ըստ ժամանակի իւրոյ պղտորութեանն» էր[27]: Դեռը, աւելի հաւանական է, կարող է վարարել աշնան անձրեւներից կամ գարնան ձնհալքից, ուրեմն եւ Նուարսակի պայմանագիրը կարելի է թուագրել 484-ի աշնանով կամ 485-ի գարնանով[28]: Բացի այդ, Փարպեցին պատմում է նաեւ, որ մինչեւ Վահանի ճամփորդութիւնը Տիզբոն Նիխորը նրանից խնդրում է Հայոց այրուձին, Պերոզի որդի Զարեհի խռովութեանը դիմագրաւելուն օգնելու համար[29]: Եւ միայն միջադէպի յաղթական աւարտից յետոյ է Վահանը ճանապարհւում Վաղարշի արքունիք: Այսպիսով, Վահանի նուաճուելու, այդու՝ սպարապետի ու Մամիկոնեան տանուտիրոջ ընտանեկան աւանդական պատիւը ետ ստանալու եւ Հայաստան վերադարձի հաւանական ամենավաղ ժամկէտը կը լինի 484 թ. վերջը կամ 485-ի գարունը[30], ամենաուշը՝ վերջին թուականի ամառը: Շատ աւելի դժուար է որոշել նրա մարզպան նշանակուելու տարին: Դատելով Փարպեցու պատմութիւնից՝ պէտք է ենթադրել, որ Հայաստանի մարզպան Անդեկանը արքունիք է կանչւում պաշտօնը փոխանցելու համար, եւ ինքն էլ տեղում խորհուրդ է տալիս Վահանի թեկնածութիւնը[31]: Մարզպանական ծառայութեան ժամկէտները արքունեաց պրոտոկոլում յստակ օրինաչափութեան չեն ենթարկուել, ուստի եւ մեզ հնարաւոր չեղաւ աւելի կոնկրետ տեղեկութիւն հաւաքել ոչ այս մասին, ոչ էլ Անդեկանի անձի մասին: Ճիշտ է, Անդեկանը Վաղարշին ուղղուած խօսքում նշում է, որ օտարազգի մարզպանին Հայաստանում երկու-երեք տարի է հարկաւոր, հազիւ ճանաչելու համար «զիրս աշխարհին, զդիւրն եւ զդժուարն, ապա զմարդիկ աշխարհին, զլաւսն եւ զվատսն...»[32], ինչից էլ կարելի է եզրակացնել, որ նա առնուազն այդքան ժամանակ էլ կեցել է երկրում, Վահանին ոչ միայն այդպէս լաւ ճանաչել կարողանալու, այլեւ արքայից արքայի առաջ նրան մարզպան կարգելու խորհուրդը տալու համար: Սակայն սա զուտ տրամաբանական ենթադրութիւն է եւ դեռեւս փաստարկներով հաստատուած չէ: Մենք այսպիսով այն առայժմ կը զետեղենք աւանդական հաշուարկի (ըստ որի Վահանը մարզպանութեան հրովարտակը ստացել է Տիզբոն մեկնելուց մէկ տարի անց)[33], այսինքն՝ 485-ի վերջ եւ 486-ի սկզբի (կամ ամառուայ) եւ 488-ի միջեւ՝ վերջին ժամկէտ ընդունելով Վաղարշի մահը[34]:

Սակայն Փարպեցու Թղթում կան մի քանի տեղեկութիւններ եւս, որոնք օգնում են աւելի յստակեցնել Կաթողիկէի վերանորոգման եւ Վահանի մարզպանութեան սկզբի տարեթուային հաշուարկները: Այսպէս, նամակի հէնց սկզբում հեղինակը պատմում է իր կեանքի մանրամասները՝ մինչեւ Վահանի նրան գտնելը եւ իր ընտանիքին յանձնելը. «Տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի ի Հոռոմս՝ ժամանակեցի անդ ամս. եւ եկեալ անտի կեցի առ Կամսարականսդ յամենայն ամբոխսն մինչեւ յամս նուաճման ձերոյ: Եւ զհետ այնորիկ, որպէս թէ ձանձրացեալ յաշխատութենէ չփոթիցն՝ կամեցայ պարապել աղաւթից եւ հանգչել: Եւ երթեալ ի Սիւնիս՝ կեցի անդ ամս երկուս... Եւ դու յայց ելեալ խնդրել զիս, եւ գտեալ յաշխարհին յայնմ՝ ածէր ի տուն...»[35]:

Այսպիսով, Փարպեցին գտնուել է Կամսարականների մօտ ապստամբութեան ողջ շրջանում, մինչեւ Վահանի նուաճուելը, այսինքն՝ Տիզբոն մեկնելը եւ Պարսկական կայսրութեան մէջ ի ծառայութիւն վերադառնալը[36], ուրեմն՝ մինչեւ 484-ի վերջ կամ 485-ի գարուն-ամառը: Այնուհետեւ, գնալով Սիւնիք՝ նա մնացել է այնտեղ եւս երկու տարի՝ անցկացնելով, ըստ իր խօսքերի, ամենաքիչը երկու ձմեռ կամ երկու ամառ: Այսինքն՝ Վահանը նրան գտել եւ բերել է իր տուն ոչ շուտ քան 486-ի վերջին կամ 487-ի գարնան-ամռանը: Ցայտնի չէ, թէ որքան է Ղազարը մնացել Մամիկոնեանների ընտանիքում մինչեւ Վաղարշապատ տեղափոխուելը: Ցամենայն դէպս, նրան հոգաբարձութեան չնորհումը տեղի է ունեցել այս թուականներից յետոյ, ինչն էլ նշանակում է, որ տաճարի վերակառուցման աշխատանքների սկիզբը, այսինքն՝ հիմնարկէքի արարողութիւնը նոյնպէս տեղի է ունեցել 486/487-ից յետոյ, իսկ ամենայն հաւանականութեամբ՝ 487-ի գարնանը կամ ամռանը, քանի որ, ինչպէս ընդունուած էր հնում շինարարական գործերը, յատկապէս՝ տաճարների կառուցումը սովորաբար սկսւում էր տարուայ այս եղանակներին: Ըստ այսմ՝ կարելի է եւ ենթադրել, որ Վահանը մարզպան է նշանակուել նոյնպէս 486-ի վերջ - 487-ի սկիզբ ժամանակային սահմաններում:

27 Փարպեցի, *Պատմութիւն*, § 94

28 Ըստ Չամչեանի՝ գեռը վարարել էր գարնան եղանակի պատճառով. *Ճշ. աշխ.*, էջ 207:

29 *Նոյն տեղում*

30 Տե՛ս Մ. Օրմանեան, *Ազգապատում*, § 320. Տէր-Մկրտչեան, *Ճշ. աշխ.*, էջ 175:

31 Փարպեցի, *Պատմութիւն*, § 98

32 *Նոյն տեղում*

33 Մ. Օրմանեան, *Ազգապատում*, § 320

34 Տէր-Մկրտչեան, *Ճշ. աշխ.*, էջ 181

35 Քննական հրատ. § 22-24, *Մատենագիրք Հայոց*, Բ հտ., Անթիլիաս-Լիբանան, 2003

36 «Նուաճումն» բառը Ռ. Թոմսոնը թարգմանել է որպէս «խռովութիւն, խոտորումն» (eclipse)՝ դրանից եզրակացնելով, որ Փարպեցին Կամսարականների մօտ է մնացել մինչեւ Վահանի ապստամբութեան սկիզբը, իսկ ապստամբութեան ընթացքում գտնուել է Սիւնիքում: Այստեղից էլ՝ երկու տարուայ ժամանակագրական անճշտութիւնը (**Thomson**, *Ճշ. աշխ.* էջ 6 եւ 250, ծնթ. 9): Իւզբաշեանը այս ենթատեքստում նախընտրում է մեկնաբանել՝ «հաշտութիւն, համաձայնութիւն» (**Youzbašyan**, *L'amertume...*): Սակայն դատելով Փարպեցու նախորդ շարադրանքներից, մանաւանդ՝ Վաղարշի մօտ խորհրդի հաւաքուած մեծամեծների դրուագից («Երթ ի Հայս, եւ որ ինչ օրինակաւ եւ է՝ ամենայն քաղցրութեամբ եւ սիրով ըստ կամացն Վահանայ եւ նորուն ընկերակցացն՝ նուաճեալ զորեարն եւ յԱրեաց ի ծառայութիւն ա՛ծ», § 88)՝ այստեղ «նուաճում» բառն այստեղ աներկբայօրէն հպատակուելու, հնազանդուելու իմաստն ունի, որում Մամիկոնեանի համար նուաստացուցիչ ոչինչ չկայ, ինչպէս կարծում է Իւզբաշեանը, քանի որ արքայից արքային հպատակութեան վերադառնալու համար Վահանը իր պայմաններն է թելադրել, որոնք էլ ընդունուել են:

© National Library of Armenia